ԼԳ.

Ժանտամահի մը անգութ հունձքն է՝ զոր կը նկարագրէ Հ. Միքայէլ Վ. Սեբաստացի այսպէս.

Վերապատուելագունեղի տեառն տեառն Միխիթարայ Աստուածաբանուրեան Վարդապետի, Աբբայ Հօրդ վերում

. . . լուաք թէ նաւերն հասեալ են ի Պոլչա ատան. թուի թէ ոչ գայ ի ներս հրեշտակն վասն երկիւղի մահուան. բարուք լինէր թէ մերայինք ևս ոչ գայցէին. զի կարի սաստիկ է և երկարատև եղև մահն. և խեղճ բազումք են. և բաց ի մահուան՝ նաև պէս-պէս հիւանդութիւնք զոն. են տունք՝ յորս չորս, են՝ յորս հինգ, մեռանօղք ի մէջ երկուց կամ երից կամ չորից աւուրց։ Գրեթէ իւրաքանչիւրում աւուր նորապէս շահիմք զմեզ և զամենայն բարեկամս մեր ի ձեռն ուժոյ աղօթից և պաղատանաց, թէպէտ նաև ի մէջ ոմանց բարեկամաց մերոց անկաւ մահն։ Նաև վերապատուելի Պօղոս Վ.ն ևս ընկոնեցեալ եղև, անկաւ ի մահիճ ի Սամաթիա ի տան Պօյաճոցն, տնեցիք հանդերձ մաներբ փախեան յայլուր. միայն մնաց Եղիա Վ.ի քոյրն և փեսայն և պառաւ մայրն, կալով ի հեռուստ ի հին տանն. և Հայր Պօղոսն ի նորաշէն տանն եղեալ ի մահիճ, և վերապատուելի Պօղոս Վ. կոչեալ զմայրն իւր ծերունի առ ինքն, որպէս մերձ առ ինքն լիցի և ծառայիցէ։... Նաև զհրեայ բժիշկ մի կոչեալ էր, զի դարմանիցէր, եղեալ ի վերայ մահավիրին (որ էր ի յաճուկն) զեախու, զի կամ ծակիցէ, կամ փարատիցէ, որպէս յայժմ երևի թէ փարատի...։ Նաև ի մէջ տաճկաց ծածկապէս աւերութիւն քոյ. ասեն թէ մերձակայ ժամանակիս ֆէսատ մի ելանէ. խոշտանկէ զքրիստոնեայս։ Մեծ պարոնին վասն ասեն թէ բանավարութիւնն կորուսեալ է, զի մի պսակ գալոց է ի գլուխն, զի յոմանս պալատս շրջեալ, ի զիշերի յաներևութից քարկոծիւր պալատն, զբազում պահապանս եղեալ, ոչ կարաց վերահասու լինել թէ ուստի իցէ. վասն որոյ երկուցեալ՝ ի միոյն առ միւսն գնայր. և անդ ևս զնոյն զգացեալ, վասն որոյ զամենայն զէտս և զմոգս կալեալ եղ ի բանտի։ Նաև զօրք սոցին ի յարևելս աւերեցեալք և կոտորեցեալք ասին, բայց թէ ուստի, ոչ լսի։ Նաև գերեզմանատեղ սուտ մարգարէին առեցեալ գոլ ասի։ Նաև ի Մարաց աշխարհն գլուխ մի բարձրացեալ խմբօք, աւերեալ և գերեալ զայն աշխարհն։ Եւ բազում նեղութիւն ունին անատօլցիք և արևելեանք ենթ տէրութեան սոցին եղեալքն։...

Գերյարգութեան քում, մնամ պատրաստական ծառայ ամենայնի

Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

1726 Սեպ. 1. ի Կոստանդնուպոլիս
գիր — 12

ԼԴ.

Մայրավանքիս դիւանին մէջ հետագայ նամակին հետ միասին կը գտնուի հայ թարգմանութիւնը ուրիշ ընդարձակ պաշտօնական վաւերաթուղթի մը՝ որ Ս. Աթոռին կողմանէ տրուած է առ Յովհան Եպիսկոպոս։

Նկատելով որ սերտ առնչութիւն ունի մեր հրատարակած նամակին պարունա-